ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<02>> հոկտեմբերի 2025թ. N ՄՈ/876 - Ա

ք. Արմավիր

«ԽԱՆՋՅԱՆԻ ԱՐՄԵՆ ԲԵՆԻԱՄԻՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Աննա Հովսեփյանի 2025 թվականի հոկտեմբերի 2-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աննա Հովսեփյանին տրամադրել 2023-2024 թվականների աշխատանքային տարվա երկարացված արձակուրդի մասը՝ 2025 թվականի հոկտեմբերի 9-ից 16-ը ներառյալ՝ 6 աշխատանքային օր տևողությամբ:
2. Աննա Հովսեփյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Հասմիկ Շաքրիկյանին:
3. «Խանջյանի Արմեն Բենիամինի Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Հասմիկ Շաքրիկյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հոկտեմբերի 9-ից 16-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Աննա Հովսեփյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվական հոկտեմբերի 17-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**